ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի ելույթը Մելիքգյուղի դպրոցի բացման ժամանակ

Մեծարգո տեր եւ տիկին Մարի եւ Հրաչյա Սուրենյաններ, ,,Հայաստան,, համահայկական հիմնադրամի հարգարժան տնօրեն Արա Վարդանյան, հարգելի հյուրեր, հայրենակիցներ, Մելիքգյուղի բնակիչներ

Մարզի այս հեռավոր գյուղում այսօր բոլորիս համար կարևոր մի իրադարձություն է: Վերջերս ավարտին հասցվեց ,,Հայաստան,, համահայկական հիմնադրամի միջոցներով իրականացվող դպրոցի շենքի հիմնանորոգումը: Այն իրականացվել է արգենտինահայ բարերարներ տեր եւ տիկին Մարի եւ Հրաչյա Սուրենյանների, նրանց մի խումբ բարեկամների միջոցներով:

Կրթությունը մեր ժողովրդի համար բոլոր ժամանակներում եղել է առաջնային խնդիրներից մեկը, քանզի, գիրն ու գրականությունը, դպրությունն ու մշակույթը կարողացան դարերի փորձությունների միջով մեր ժողովրդին հասցնել 21-րդ դար:

Մարզում իրականացվող բազմաթիվ ծրագրերի մեջ առանձնակի տեղ ունի դպրոցաշինությունը: Դպրոցների ավելի քան 70 տոկոսում կառուցման կամ հիմնանորոգման աշխատանքներ են տարվել: Գործընթացը շարունակական է, եւ առաջիկայում ծրագրերի շրջանակը ավելի ընդգրկու ն եւ ընդլայնված կդառնա:

Անչափ ուրախ եմ, որ մելիքգյուղցիները հնարավորություն ունեն այս բարենորոգ շենքում լավագույնս իրականացնելու կրթության եւ դաստիարակության ավանդույթները: Սակայն, միայն շինությունը բավարար չէ: Վստահ եմ, որ դպրոցի մանկավարժները ամենայն սիրով եւ պատասխանատվությամբ կնվիրվեն իրենց գործին, որի պարագայում կարելի կլինի ունենալ լավագույն արդյունք:

Հարգելի ներկաներ, թույլ տվեք շնորհակալություն հայտնել մեր հարգարժան բարերարներին, ,,Հայաստան,, համահայկական հիմնադրամին, այս ազգանվեր եւ հայրենասիրական նախաձեռնության համար եւ շնորհավորել բոլորիս, Մելիքգյուղի ողջ բնակչությանը, ուսուցիչներին, աշակերտներին եւ ծնողներին: